

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Բ Ո Շ ՈՒ Մ 12/7

7 հունիսի 2016թ.

Քննարկվեց «Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» ՀԿ գանգատը սոցիալական ապահովության վճարի գծով հաշվարկված պարտավորությունների դեմ:

«Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» ՀԿ գանգատում բերված փաստարկները.

«Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» հասարակական կազմակերպությունը (այսուհետ նաև կազմակերպություն), գրանցված լինելով Երևանում, իր հարկային պարտավորությունները կատարում է ժամանակին և հարկերը վճարում է ՀՀ պետական բյուջե: 2015 թվականին ԼՂՀ քաղաքացիների կողմից կազմակերպությանը քաղաքացիա-իրավական պայմանագրերի շրջանակներում ԼՂՀ-ում մատուցվել է ծառայություն: Նշված գործարքի արդյունքում առաջացած եկամտային հարկը կազմակերպության կողմից ժամանակին վճարվել է: ՀՀ-ում գործող օրենսդրության համաձայն ծառայություն մատուցող անձինք պետք է վճարեին նաև սոցիալական վճար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծառայություն մատուցող անձինք ԼՂՀ քաղաքացիներ էին և ԼՂՀ-ում չի գործում սոցիալական վճարի նորմը, կազմակերպությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն էր դիմել նշված անձանցից սոցիալական վճար գանձելու/չգանձելու հարցը ճշտելու նպատակով և ստացել այն չգանձելու պատասխան (գրությունը կցվում է): Պետք է նշել, որ ԼՂՀ քաղաքացիների անձնագրերը համապատասխանում են ՀՀ միասնական անձնագրային տեղեկատվական համակարգին, սակայն ԼՂՀ քաղաքացիների համար տարանջատված է 070 կոդը:

Օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայություն մատուցած անձանց վերաբերյալ գրանցման հայտերը էլեկտրոնային եղանակով հանձնվել են, որտեղ վերոնշյալ պատճառից ելնելով, գրանցվել է ՀՀ անձնագիր հասկացությունը, որից հետո նաև եկամտային հարկի վերաբերյալ հաշվետվությունը: Հանձնված հաշվետվության մեջ ավտոմատ հաշվարկվել է նաև սոցիալական վճարը, որը տեխնիկական պատճառներից ելնելով էրեբունու ՀՏ աշխատակիցների կողմից չի գրոյացվել: Կազմակերպությունը, հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության գրությունը, սոցիալական վճարը չի գանձել ԼՂՀ քաղաքացիներից և, հետևաբար նաև չի վճարել ՀՀ պետական բյուջե: Պարզվել է նաև, որ կազմակերպության սոցիալական վճարի գծով նշված պարտավորությունը չի գրոյացվել տեխնիկական, մասնավորապես ծրագրային անթույլատրելիության պատճառով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գանգատաբերը խնդրում է ապահովել ՀՀ ֆինանսների նախարարության գրությամբ նշված պահանջի կատարումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» հասարակական կազմակերպությունը հաշվառված է էրեբունու ՀՏ-ում: 2015 թվականին ԼՂՀ քաղաքացիների կողմից կազմակերպությանը քաղաքացիա-իրավական պայմանագրերի շրջանակներում ԼՂՀ-ում մատուցվել է ծառայություն, որից բխող եկամտային հարկը կազմակերպության կողմից սահմանված կարգով վճարվել է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծառայություն մատուցող անձինք եղել են ԼՂՀ քաղաքացիներ, ինչպես նաև այն, որ ԼՂՀ-ում չի գործում սոցիալական վճարի վճարման նորմը, հետևապես սոցիալական վճարի հաշվարկման հարցի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով կազմակերպությունը դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն: Պատասխան գրությունում մասնավորապես նշվել է, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի նախաբանի համաձայն՝ տվյալ օրենքով նախատեսված սոցիալական վճարները կատարվում են Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային գործունեությամբ զբաղված աշխատողների կողմից, հետևապես գրությամբ նշված անձանց կողմից ստացված եկամուտներից սոցիալական վճարներ չեն հաշվարկվում:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ԼՂՀ քաղաքացիների կողմից քաղաքացիա-իրավական պայմանագրերի շրջանակներում կազմակերպությանը ԼՂՀ-ում մատուցված ծառայությունների դիմաց վճարված գումարներից սոցիալական վճար չպետք է հաշվարկվի: Այսինքն, սոցիալական վճարի գծով հաշվարկված պարտավորությունները ենթակա են վերահաշվարկման, չնայած նրան, որ հարկային մարմին նման հնարավորություն ընձեռնված չէ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

«Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» ՀԿ գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ